## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
## № ԳՀԱՊՁԲ-20-9/4-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան**

**27-ը մայիսի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Է. Փոթոյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **13.01.2020թ**. կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-9/4-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

### 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***11,438,140 (տասնմեկ միլիոն չորս հարյուր երեսունութ հազար հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

### 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| --- | --- |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Հասցե՝ք.Երևան, Աբովյան փ./23 |
| ՀՀ ՖՆԱգործառնական վարչություն | Բանկ՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 19300106184800 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02811842 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | տնօրեն |
| ______ ՅՈՒԼՋՅԱՆ | ______ Է. ՓՈԹՈՅԱՆ |

Հ/ա Հհ Հկզ-ա Հյա Հ
24 00323 2188

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/4-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ., ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ. |
| 18. | Մերոպենեմ (մերոպենեմի տրիհիդրատ) | հատ | 1,000 | 6,399 | 6,399,000 | | 500 | 500 |
| 23. | Ֆլուկոնազոլ | հատ | 5,000 | 61.90 | 309,500 | | 2500 | 2500 |
| 24. | Ֆլուկոնազոլ | հատ | 3,000 | 62 | 186,000 | | 1500 | 1500 |
| 30. | Հակափայտացման շիճուկ | հատ | 160 | 3,349 | 535,840 | 80 | | 80 |
| 31. | Հակագանգրենոզ շիճուկ | հատ | 40 | 96,520 | 3,860,800 | | 40 | |
| 48. | Ացետիլսալիցիլա-թթու | հատ | 3,000 | 49 | 147,000 | 1500 | 1500 | |
| **Ընդամենը** | | | | | **11,438,140** | | | |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/4-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| 18. | **Մերոպենեմ j01dh02**/Մերոպենեմ (մերոպենեմի տրիհիդրատ) | 33651143/503 | 6,399,000 | 0 | 0 | 3,199,500 | 3,199,500 | 3,199,500 | 6,399,000 | 6,399,000 | 6,399,000 |
| 23. | **Ֆլյուկոնազոլ d01ac15, j02ac01, j02ac01**/Ֆլուկոնազոլ/ | 33651150/505 | 309,500 | 0 | 0 | 154,750 | 154,750 | 154,750 | 309,500 | 309,500 | 309,500 |
| 24. | **Ֆլյուկոնազոլ d01ac15, j02ac01, j02ac01**/Ֆլուկոնազոլ/ | 33651150/506 | 186,000 | 0 | 0 | 93,000 | 93,000 | 93,000 | 186,000 | 186,000 | 186,000 |
| 30. | **Իմունային շիճուկ**/Հակափայտացման շիճուկ / | 33651189/505 | 535,840 | 267,920 | 267,920 | 267,920 | 267,920 | 267,920 | 535,840 | 535,840 | 535,840 |
| 31. | **Իմունային շիճուկ**/Հակագանգրենոզ շիճուկ/ | 33651189/506 | 3,860,800 | 0 | 0 | 3,860,800 | 3,860,800 | 3,860,800 | 3,860,800 | 3,860,800 | 3,860,800 |
| 48. | **Ացետիլսալիցիլաթթու a01ad05, b01ac06, n02ba01**/Ացետիլսալիցիլա-թթու/ | 33661121/507 | 147,000 | 73,500 | 73,500 | 147,000 | 147,000 | 147,000 | 147,000 | 147,000 | 147,000 |
| **Ընդամենը** | | | **11,438,140** | **341,420** | **341,420** | **7,722,970** | **7,722,970** | **7,722,970** | **11,438,140** | **11,438,140** | **11,438,140** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ [illegible] վարչության պետ

[illegible]ԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԱԻԴԱ ՖԱՐՄ» ՍՊԸ
տնօրեն

Է. ՓՈԹՈՅԱՆ